ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 215 - Ա

15 հունիսի 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 31-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 29-ի N 170-Ն որոշմամբ սահմանված հավելվածի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի հունիսի 2-ի N 379-Ա հրամանը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի հունվարի 29-ի «Ալբերտ Աղեկյանին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնում վերանշանակելու մասին» N 31-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրի «Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնում» բառերը փոխարինել «Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնում» բառերով.

2) որոշման նախաբանի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի» բառերով.

3) որոշման 1-ին կետի «Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալի (ծածկագիր՝ 94-Ղ3-1) պաշտոնում:» բառերը փոխարինել «Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալի (պաշտոնի ծածկագիրը՝ 94-Ղ3-1) պաշտոնում:» բառերով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 37108405

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք.Գավառ